Փաստ. անվանումը	**Գիտական խորհրդի աշխատակարգ**
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-04-02
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Վերջին վերանայման ամսաթիվ	05/05/2023
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Աշխատանքային խումբ
Ներդրման/ իրականացման պատասխանատու	Գիտական խորհրդի նախագահ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամսաթիվ	**Կատարված փոփոխություն**	**Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն**
05/05/2023	Աշխատակարգը վերանայվել է ԵՄՀ կանոնադրության (հաստատված նոր խմբագրությամբ 2023թ.) հիման վրա	Գիտական խորհրդի նախագահ Սուրեն Օհանյան
12/12/2014	Աշխատակարգն ամբողջությամբ վերանայվել է	Գիտական խորհրդի նախագահ Սուրեն Օհանյան

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն աշխատակարգը սահմանում է Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետ՝ համալսարան կամ ԵՄՀ) Գիտական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման, անցկացման, որոշումների ընդունման, նիստերի արձանագրման ընթացակարգը և գիտական խորհրդի գործունեությանը առնչվող այլ հարցեր:

1.2. Սույն աշխատակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի կողմից:

2. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համալսարանի գիտական խորհուրդը համալսարանի ռեկտորի նախագահությամբ գործող ուսումնամեթոդական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կառավարման կոլեգիալ մարմին է: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 3 տարի է:

2.2. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր աշխատակարգը.

2) լիցենզիայով սահմանված տեղերի շրջանակում, համալսարանի ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերը, վճարովի ուսուցման վարձավճարների չափերը, սահմանում է դրա հետ կապված առանձին արտոնությունները.

3) համալսարանի ռեկտորի ներկայացմամբ կառավարման խորհդին ներկայացնում է առաջարկություններ համալսարանի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ.

4) հաստատում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգերը, ներքին կարգապահական կանոնները, կարգերը, ուղեցույցները, նորմերը և համալսարանի ուսումնագիտական և այլ գործունեությունը կանոնակարգող ներքին այլ իրավական ակտերը.

5) քննարկում և հաստատում է մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը, հաստատում է կրթական ծրագրերը.

6) պարբերաբար քննարկում է ռազմավարական պլանի և այլ ծրագրային փաստաթղթերի իրականացման և կրթության որակի ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ զեկույցներ.

8) քննարկում և որոշում է համալսարանի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում և գնահատում է գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների արդյունքների մասին.

9) հաստատում է համալսարանի յուրաքանչյուր կիսամյակի պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը, գիտական խորհրդի կանոնակարգի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցութային համալրման կանոնակարգի համաձայն իրականացնում է պրոֆեսորադասախո-

սական մի շարք պաշտոնների (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր և այլն) թափուր տեղերի համալրման մրցութային ընտրությունները.

10) սահմանված կարգի համաձայն շնորհում է պրոֆեսորի ու դոցենտի գիտական կոչումներ և ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը, շնորհում է համալսարանի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում է համալսարանի մեդալով, պատվոգրով, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար ներկայացնում է թեկնածություններ.

11) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների (ամբիոն, կենտրոն և այլն) ղեկավարների ամենամյա հաշվետվությունները, դրանց հիման վրա գնահատում նրանց գործունեությունը, սահմանում ստորաբաժանումների ինչպես նաև առանձին ծրագրերի ընթացիկ գործունեության արդյունքային ցուցանիշները, եթե դրանք սահմանված չեն կառավարման խորհրդի կողմից հաստատված փաստաթղթերում.

12) համալսարանի կանոնադրությունը, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացնում է կառավարման խորհրդին.

13) քննարկում և հրատարակման է երաշխավորում մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

14) քննարկում է հանրապետության հասարակական, կրթական, գիտական, մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող հարցեր, ըստ անհրաժեշտության ընդունում հայտարարություններ.

15) ստեղծում է գիտական խորհրդին կից աշխատանքային խմբեր, հանձաժողովներ, հանձնախմբեր, խորհուրդներ (էթիկայի հանձնաժողով, մեթոդական խորհուրդ և այլն), սահմանում դրանց կազմերի ձևավորման կարգն ու աշխատակարգը, հաստատում դրանց անհատական կազմը.

16) իրականացնում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են ԵՄՀ կանոնադրությունից և ներքին այլ իրավական ակտերից.

17) իրականացնում է ՀՀ օրենսդրությունից բխող այլ լիազորություններ։

3. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը՝ 32 է։ Գիտական խորհրդի անդամների 50%-ը ի պաշտոնե հադիսանանում են գիտխորհրդի անդամ, իսկ անդամների մյուս 50%-ը խորհրդի կազմում ընդգրկվում են համապատասխան ստորաբաժանումներում իրականացվող ընտրությունների արդյունքների հիման վրա։ Գիտխորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել նաև այլ աշխատակիցներ։

3.2. Ի պաշտոնե գիտական խորհրդի անդամ են հանդիսանում համալսարանի ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, համալսարանի գիտական քարտուղարը (գիտական

խորհրդի քարտուղար), ուսումնական հարցերի գրասենյակի, հետազոտական կենտրոնի, որակի ապահովման կենտրոնի ղեկավարները, ամբիոնների վարիչները, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավարը, գիտական ամսագրի խմբագիրը, ինչպես նաև՝ համալսարանի ռեկտորի որոշմամբ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ։

Գիտական խորհրդի մյուս անդամներն ընտրվում են համալսարանի մասնագիտական կրթագիտական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների (ամբիոններ և այլն) նիստերում՝ ըստ ամբիոններում առկա հիմնական աշխատողների դրույքների թվաքանակի համամասնության՝ համաձայն գիտական խորհրդի կանոնակարգի, ինչպես նաև սովորողները՝ ուսանողական խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված։ Գիտական խորհրդի կազմում ընդգրկված/ ընտրված անձիք չպետք է հանդիսանան համալսարանի կառավարման խորհրդի անդամ։

Ամբիոնների կողմից գիտական խորհրդի անդամների ընտրության ժամանակ դիտարկվում են հետևյալ չափանիշները՝

ա/ թեկնածուի գիտական աստիճանը, կոչումը

բ/ համալսարանում հիմնական աշխատող լինելու հանգամանքը

գ/ համալսարանում աշխատելու փարձառությունը

դ/ պատրաստակամությունը ակտիվ մասնակցելու համալսարանի կառավարման գործընթացին և ներգրավված լինելու ներհամալսարանական տարբեր աշխատանքներին։

3.3. Սովորողները կազմում են գիտական խորհրդի անդամների 25%-ը։ Համալսարանի ուսանողական խորհուրդը համալսարանի սովորողների համակազմից սահմանված քվոտայի չափով ընտրում է Համալսարանի գիտական խորհրդի անդամներին՝ ուսանողական խորհրդի կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն։ Ուսանողական խորհրդի կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել և ընտրվել առնվազն մեկ տարի համալսարանում սովորած բարձր առաջադիմություն (առավելագույն միջին որակական գնահատականի 70%-ից բարձր առաջադիմություն) և ներհամալսարանական կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերող ցանկացած սովորող (ուսանող, ասպիրանտ)։ Ասպիրանտների դեպքում առաջադիմության շեմ չի սահմանվում։

3.4. Գիտական խորհրդի ընդհանուր կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով։

3.5. ԵՄՀ ռեկտորի համալսարանի հրամանով պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներից մեկը նշանակվում է ԵՄՀ Գիտական քարտուղար՝ նրա աշխատանքային պարտականությունների շրջանակը լրացնելով համապատասխան նոր գործառույթներով։ ԵՄՀ գիտական քարտուղարը կատարում է գիտական խորհրդի քարտուղարի պարտականությունները, մասնավորապես՝

1) նախապատրաստում է գիտական խորհրդի տարեկան աշխատանքային պլանը, նիստերի ժամանակացույցը, դրանք ներկայացնում գիտական խորհրդի հաստատմանը, հետևում գիտական խորհրդի տարեկան պլանով և համալսարանի այլ ռազմավարական փաստաթղթերով

նախատեսված և գիտական խորհրդի իրավասությանը առնչվող աշխատանքների իրականացմանը,

2) խորհրդի անդամների ծանուցում է նիստի մասին,

3) նախապատրաստում է գիտական խորհրդի նիստի անձանագրությունը, ստորագրում է գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները, նիստերի արձանագրություններից քաղվածքները,

4) նախապատրաստում է հրավիրվող նիստերի օրակարգերը, գիտական խորհրդի անդամների հետ քննարկում է օրակարգային հարցերի շրջանակը,

5) խորհրդի նիստում զեկուցում նիստին մասնակցող անդամների կազմի մասին,

6) կատարում է սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև խորհրդի նախագահի հանձնարարականներ:

3.6. Գիտական խորհրդի անդամներին նիստի նիստերի սղագրումը (ձայնագրությունը) և անդամների գրանցումը, նիստի տեխնիկական նախապատրաստման աշխատանքները իրականացվում է Ռեկտորի օգնականի կողմից:

3.7. Համալսարանի գիտական խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է ԵՄՀ կանոնադրության և սույն աշխատակարգի պահանջներին համապատասխան՝ մինչև գործող խորհրդի լիազորությունների ժամկետի լրանալը:

2. ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Գիտական խորհուրդն իր գործունեությունը իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

2.2. Գիտական խորհրդի հերթական նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 6 անգամ:

2.3. Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել առկա, հեռավար կամ համակցված (առկա և հեռավար եղանակների զուգակցմամբ) եղանակներով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև՝ հարցման եղանակով: Խորհրդի նիստերը արձանագրվում են, իսկ հեռավար կամ համակցված եղանակով անցկացված նիստերը՝ նաև ձայնագրվում:

2.4. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

2.5. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են ռեկտորի նախաձեռնությամբ կամ առավելագույնը երկշաբաթյա ժամկետում՝ գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

2.6. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են համալսարանի ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ) և գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար):

2.7. Գիտական խորհրդի քարտուղարը գիտական խորհրդի նիստ (հերթական և արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր (էլեկտրոնային եղանակով) ծանուցում է գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն հինգ, իսկ արտահերթ նիստի անցկացման օրվանից՝ առնվազն երկու օր առաջ: Գիտական խորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) գիտական խորհրդի անդամներին է ուղարկվում հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, իսկ արտահերթ նիստի դեպքում՝ առնվազն մեկ օր առաջ:

2.8. Գիտական խորհրդի անդամների ներկայության մասին տեղեկատվությունը նիստի մեկնարկին խորհրդի անդամներին տեղեկացնում է գիտական քարտուղարը: Քվորում չապահովելու դեպքում Խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել առավելագույնը մեկ ժամով մինչև քվեակազմի ապահովումը, կամ հետաձգվել նիստը:

2.9. Խորհրդի քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է ընդհանուր կարգով:

2.10. Գիտական խորհրդի նախագահը, բացելով խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության դնում օրակարգը:

2.11. Խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

2.12. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

3. ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե ԵՄՀ կանոնադրությամբ, սույն աշխատակարգով կամ խորհրդի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել:

3.2. Գիտական խորհրդի որոշումներն ու հավելվածները ստորագրում է գիտական խորհրդի նախագահը:

3.3. Ակադեմիական կազմի պաշտոնների տեղակալման, գիտական կոչումների ներկայացման, ամբիոնների վարիչների ընտրությունները և այլ մրցույթները կազմակերպվում են փակ, գաղտնի քվեարկությամբ: Այս դեպքում նիստերը չեն կարող անցկացվել հարցման կարգով:

3.4. Փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստվում են խորհրդի գիտական քարտուղարի կողմից:

4. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

4.1. Գիտական խորհրդի արձանագրությունը կազմում է խորհրդի քարտուղարը (նիստն արձանագրող) խորհրդի նիստը ավարտվելուց հետո՝ առավելագույնը մեկ շաբաթվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

4.2. Նիստի արձանագրությունը ուղարկվում է խորհրդի անդամներին:

4.3. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ձևը, վայրը, ամսաթիվը, ներկա անդամների ցանկը (քվեակազմը), նախագահը (նախագահողը), քարտուղարը (նիստը արձանագրողը), օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները: Արձանագրությանը կցվում են տվյալ նիստում հաստատված փաստաթղթերը, ներկայացված զեկույցները և օրակարգի հարցի վերաբերյալ շրջանառված այլ փաստաթղթեր:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

5.1. Հաշվիչ հանձնաժողովը ստեղծվում է գիտական խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների փոխատեղման սկզբունքով: Նիստի հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատում է գիտական խորհուրդը՝ գիտական խորհրդի նախագահի առաջարկությամբ՝ ըստ գիտական խորհրդի ցուցակային կազմի:

5.2. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է փակ գաղտնի քվեարկությունները, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը, քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգի պահպանումը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ և այն ներկայացնում գիտական խորհրդի հաստատմանը:

6. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

6.1. Գիտական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության, կարող են ստեղծվել մշտական և ժամանակավոր աշխատանքային խմբեր, հանձաժողովներ, հանձնախմբեր, խորհուրդներ ((մեթոդական խորհուրդ, որակի ապահովման, էթիկայի, իրավական ակտերի մշակման հանձնաժողովներ և այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունն ու աշխատակարգը սահմանում է գիտական խորհուրդը: Աշխատանքային խմբերի, հանձաժողովների, հանձնախմբերի և խորհուրդների կազմում կարող են ընդգրկվել գիտական խորհրդի անդամ չհանդիսացող ԵՄՀ աշխատակիցներ և ուսանողներ:

6.2. Հանձնաժողովների խնդիրն է իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկության ներկայացումը:

6.3. Հանձնաժողովների կառուցվածքն ու կազմը որոշում է գիտական խորհուրդը:

6.4. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում են գիտական խորհրդի և ռեկտորի հանձնարարությամբ:

6.5. Հանձնաժողովներն իրավունք ունեն համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր:

6.6. Հանձնաժողովների նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է անդամների առնվազն 2/3-ը: Հանձնաժողովների նիստերն արձանագրվում են, որոնք ստորագրում են նախագահը և քարտուղարը:

6.7. Հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում, հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

6.8. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցի վերաբերյալ ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել գիտական խորհրդին:

7. ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

7.1. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից կառավարման խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում համալսարանի կրթագիտական գործունեություն իրականացնող կառուցվածքային միավորները (ամբիոններ), իսկ ընտրությունը իրականացվում է գիտական խորհրդի նիստում: Ամբիոնների կողմից առաջադրված թեկնածուների ցանկից համալսարանի գիտական խորհուրդը ընտրում է սահմանված քվոտայի չափով ընտրում է կառավարման խորհրդի անդամներին:

7.2. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված կառավարման խորհրդի անդամները ներկայացնում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի շահերն ու կարծիքը կառավարման խորհրդում, որպես պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ՝ ապահովում են նրանց մասնակցությունը բուհի կառավարման գործընթացներում:

7.3. Առաջադրված թեկնածուները պետք է վայելեն դասախոսական անձնակազմի վստահությունը, տիրապետեն բուհական կառավարման տարբեր խնդիրներին, պատրաստակամ լինեն հասարակական հիմունքներով մասնակցել կառավարման խորհրդի աշխատանքերին, իրենց առաջադրած կոլեկտիվների (ամբիոնների) նիստերում պարբերաբար ներկայացնեն կատարված աշխատանքը, քննարկվող հարցերի շրջանակը և քննարկեն գործընկերներին հուզող հարցերը:

7.4. Գիտական խորհուրդը պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից առաջադրված թեկնածուներին ընտրելիս դիտարկում է նաև հետևյալ չափանիշները՝ առաջադրված թեկնածուի գիտական աստիճանը, դասավանդման ստաժը, բուհական համակարգի կառավարման տարբեր խնդիրների իմացությունը, թեկնածուի պատրաստակամությունը ներգրավվելու բուհի կառավարման գործընթացներում և կատարելու կառավարման խորհրդի անդամի պարտականությունները:

7.5. Արտաքին շահակիցներից Համալսարանի կառավարման խորհրդի անդամության թեկնածուները (համալսարանի հետ ակտիվ համագործակցող գործատու ընկերությունների,

գիտահետազոտական կազմակերպությունների, հասարակական միավորումների ղեկավարներ կամ ներկայացուցիչներ, շրջանավարտներ) կարող են առաջադրել համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ուսանողական խորհուրդը: Առաջադրված անձանց ցուցակից՝ սահմանված քվոտայի չափով, համալսարանի գիտական խորհուրդն առաջնորդվելով իր կողմից սահմանված չափանիշներով, ընտրում է Կառավարման խորհրդի անդամներին:

7.6. Արտաքին շահեկիցները պետք է ներկայացնեն համալսարանի հետ համագործակցող կամ համալսարանի համապատասխան մասնագիտությունների գծով գործատու համարվող տարբեր կազմակերպություններ՝ պետական կառավարման և տեղեկան ինքնակառավարման մարմիններ, պետական կազմակերպություններ, մասնավոր շահույթ հետապնդող կազմակերպություններ, գիտահետազոտական կազմակերպություններ, հասարակական միավորումներ, միջազգային կառույցներ և այլն: Արտաքին շահեկիցներին ներկայացնող կառավարման խորհրդի անդամ հանդիսացող անձիք պետք է հանդիսանան վերոհիշյալ կազմակերպությունների ղեկավարներ կամ զբաղեցնեն համապատասպան բարձր պաշտոն:

7.7. Արտաքին շահեկիցներին ընտրելիս համալսարանը հաշվի է առնում տվյալ կազմակերպության կամ նրա ներկայացուցչի ներգրավվածությունը համալսարանում իրականացվող աշխատանքներում (պրակտիկաների իրականացում, կարիերայի խթանման միջոցառումներ, ներգրավվածություն ավարտական ատեստավորմանը, դասավանդում, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում, համատեղ ծրագրերի իրականացում և այլն), ինչպես նաև առաջադրված թեկնածուի պատրաստակամությունը մասնակցելու ներհամալսարանական գործընթացներում: